

ԿՅԱՆՔՆ  
ԱԽՏՈՐՈՇՈՒՄԻՑ  
ՅԵՏՈ



**RUSSIA**

## Ու՞ր դիմել աջակցության համար

Գրքույկը հրատարակված է ,ՍՊԻԴ ինֆուսվյազե տարածաշրջանային հասարակական կազմակերպության կողմից Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներին վարակիչ հիվանդությունների դեմ պայքարում աջակցության տրամադրման ծրագրի շրջանակներում:



**RUSSIA**

Ծրագրի լոգոտիպը

© տրամադրվում է անվճար, 2013 թ.

При перепечатке ссылка на «СПИД инфосвязь» обязательна

Այս տեղեկատվական գրքույկը նախ և առաջ այն մարդկանց համար է, որոնք նոր են իմացել ՄԻԱՎ-ի նկատմամբ իրենց դրական կարգավիճակի մասին: Յուրաքանչյուր մարդ յուրովի է արձագանքում այդ լուրին: Ոմանք ունենում են տագնապի և վախի զգացում իրենց և իրենց հարազատների համար, ոմանց հանգիստ չի տալիս մեղքի զգացումը, ոմանք էլ չափազանց ընկճվում են՝ կարծելով, թե ՄԻԱՎ վարակ ախտորոշումն ամեն ինչի վերջն է...

Միայլ է կարծել, թե ՄԻԱՎ վարակ ունեցողներն անհուսալիորեն դատապարտված մարդիկ են: Ողջ աշխարհում ՄԻԱՎ-ով ապրող բազմաթիվ մարդիկ կարողացել են հաղթահարել իրենց կյանքում ստեղծված նոր իրավիճակը՝ շարունակելով ապրել լիարժեք կյանքով: Այս փոքրիկ գրքույկը ներառում է հենց այդ մարդկանց փորձը: Այն կօգնի գտնելու Ձեզ հուզող հարցերի պատասխանները, ավելի շատ իմանալու ՄԻԱՎ վարակի մասին և հասկանալու, թե ինչպես ապրել ՄԻԱՎ-ով:

**Բովանդակություն**

**Բաժին 1. Հիմնական տեղեկություններ**

**ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին** ..... 5  
 ,ՄԻԱՎ վարակե ախտորոշումը ..... 5  
 Գլխավորը փոխանցման ուղիների  
 մասին..... 11

**Բաժին 2. Հոգեկան առողջություն** ..... 15

Վերաբերմունք սեփական անձի  
 հանդեպ ..... 16  
 Հարաբերություններ ուրիշների հետ ... 20  
 Սեռական հարաբերություններ..... 23

**Բաժին 3. Ֆիզիկական առողջություն** ... 24

Բժշկական հսկողություն, կանխարգելում  
 և բուժում..... 24  
 Համագործակցություն բժշկի հետ ..... 28  
 Ընտանիք և երեխաների ծնունդ..... 31  
 Առողջ սննդի սկզբունքները..... 37  
 Ֆիզիկական վարժությունները՝ որպես  
 ինքնազգացողության և տրամադրության  
 բարելավման միջոց ..... 40

**Բաժին 4. Ու՞ր դիմել օգնության համար**... 44

## Բաժին 1. Հիմնական տեղեկություններ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մասին

### **,ՄԻԱՎ վարակե ախտորոշումը**

ՄԻԱՎ-ը՝ մարդու իմունային անբավարարության վիրուսը, թուլացնում է իմունային համակարգը, որը պաշտպանում է օրգանիզմը տարբեր վարակներից: ՄԻԱՎ-ն ախտահարում է իմունային համակարգի որոշակի բջիջներ՝ CD4+ բջիջները, որոնց քանակից դատում են հիվանդության փուլի մասին:

ՄԻԱՎ վարակը դանդաղ զարգացող վիրուսային ինֆեկցիա է: Վարակվելուց հետո՝ առաջին տարիներին, իմունային համակարգը կարողանում է ինքնուրույն պայքարել վիրուսի դեմ:

Վարակվելուց հետո՝ մինչև առաջին կլինիկական ախտանշանների ի հայտ գալը, կարող են անցնել տարիներ, միջինը 8-10 տարի: ՄԻԱՎ-ով ապրող որոշ մարդիկ

կարող են մնալ գործնականորեն առողջ 20 և ավելի տարի: Դա կախված է մի շարք գործոններից՝ իմունային համակարգի և ընդհանուր առողջական վիճակից, ապրելակերպից, սեփական առողջության հանդեպ վերաբերմունքից, սթրեսը հաղթահարելու կարողությունից և այլն:

Ժամանակի ընթացքում

վիրուսի և օրգանիզմի երկարատև հակամարտության հետևանքով իմունային համակարգն ընկճվում է, և մարդը դառնում է խոցելի մի շարք հիվանդությունների (տուբերկուլոզ, պնևմոցիստային թոքաբորբ, տոքսոպլազմոզ, հերպես և այլն) նկատմամբ, որոնք կոչվում են օպորտունիստական վարակներ (անգլերեն opportunity՝հնարավորություն բառից):

Երբ ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական մարդու մոտ զարգանում են մեկ կամ մի քանի օպորտունիստական հիվանդություններ, և/կամ CD4+ բջիջների քանակը նվազում է մինչև որոշակի մակարդակ, դրվում է ,ՁԻԱՅԵ

ախտորոշում, որը ՄԻԱՎ վարակի վերջնային փուլն է:

Ներկայումս կան դեղեր, որոնք հնարավորություն են տալիս կառավարելու ՄԻԱՎ վարակի ընթացքը, հետաձգելու ՁԻԱՅ-ի փուլի զարգացումը: Այլ դեղերի օգնությամբ կարելի է կանխարգելել կամ բուժել օպորտունիստական որոշ վարակներ: Ցավոք, դեռևս չկա այնպիսի դեղ, որի օգնությամբ հնարավոր լիներ արմատապես բուժել ՄԻԱՎ վարակը: Սակայն ողջ աշխարհում այսօր իրականացվում են աշխատանքներ այդպիսի դեղեր ստեղծելու ուղղությամբ:

Որպես կանոն, վարակվելուց հետո՝ առաջին տարիներին, մարդը բուժման կարիք չի ունենում: Դիմադրողականության թուլացման դեպքում, երբ օրգանիզմը կորցնում է տարբեր վարակների ինքնուրույն դիմակայելու ունակությունը, նշանակվում է յուրահատուկ բուժում:

ՄԻԱՎ-ով ապրող մարդու համար կարևոր է մասնագետի մոտ պարբերաբար հետազոտվելը: Դա կօգնի ժամանակին իրականացնելու օպորտունիստական

վարակների կանխարգելում կամ բուժում, անհրաժեշտության դեպքում սկսելու հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժում: Հետազոտությունների պարբերականությունը սահմանում է բժիշկը՝ հաշվի առնելով հիվանդի վիճակը:

**ՄԻԱՎ-ով ապրող մարդու համար կարևոր է մնալ իր կյանքի և իրավիճակի տերը: Դրան կօգնի ՄԻԱՎ վարակի ընթացքի, տարբեր հետազոտությունների արդյունքների նշանակության, բուժման մեթոդների և առողջությունը պահպանելու ուղիների վերաբերյալ տեղեկատվությունը:**

**Իմունային կարգավիճակ և վիրուսային ծանրաբեռնվածություն**

ՄԻԱՎ վարակի ընթացքին հետևելու կարևոր ցուցանիշներ են CD4+ բջիջների քանակը և վիրուսային ծանրաբեռնվածության (ՎԾ) մակարդակը:



### **Ի՞նչ նշանակություն ունի CD4+ բջիջների քանակի որոշումը**

CD4+ բջիջների քանակը որոշվում է արյան 1մմ3-ում: Ըստ CD4+ բջիջների քանակի՝ կարելի է պատկերացում կազմել իմունային համակարգի վիճակի, դրա ընկճվածության աստիճանի մասին և կանխորոշել այս կամ այն երկրորդային հիվանդությունների զարգացումը: Առողջ մեծահասակների մոտ CD4+ բջիջների քանակը կազմում է միջինը 800-1200 բջիջ արյան 1մմ3-ում: Որոշ գործոններ, օրինակ՝ հոգնածությունը, տարբեր հիվանդությունները, կարող են CD4+ բջիջների քանակի ժամանակավոր նվազման պատճառ դառնալ:

ՄԻԱՎ վարակով հիվանդների մոտ CD4+ բջիջների քանակի 200-ից ցածր լինելը վկայում է իմունային համակարգի լուրջ ախտահարման մասին և մեծացնում է կյանքի համար վտանգավոր օպորտունիստական վարակների զարգացման հավանականությունը:

CD4+ բջիջների քանակի որոշումն օգնում է բացահայտելու ՀՌՎ բուժումն սկսելու անհրաժեշտությունը:

**Ի՞նչ է վիրուսային ծանրաբեռնվածությունը**

ՎԾ-ն ցույց է տալիս արյան մեջ ազատ շրջանառվող վիրուսների քանակը: Այս հետազոտությամբ որոշվում է արյան 1 մլ-ում առկա ՄԻԱՎ-ի ՌՆԹ-ի պատճենների քանակը, օրինակ՝ 20000 պատճեն/մլ: Ներկայումս կիրառվող ամենազգայուն թեստ-համակարգերն անգամ չեն կարող հայտնաբերել 20 պատճեն/մլ-ից ցածր ՎԾ-ն: Ուստի, երբ նշվում է ՀՌՎ բուժման արդյունքում մինչև անորոշելի մակարդակ ՎԾ-ի նվազման մասին, չի նշանակում, թե վիրուսն ընդհանրապես անհետացել է արյան միջից, պարզապես վիրուսային ՌՆԹ-ի պատճենների քանակը փոքր է թեստ-համակարգի զգայունության սահմաններից: ՎԾ-ի մակարդակից կարելի է դատել ՄԻԱՎ վարակի հարաճուն զարգացման մասին:

Եթե համեմատենք ՄԻԱՎ վարակի զարգացումը գնացքի հետ, որը սլանում է դեպի իր նշանակման վայրը՝ ՁԻԱՀ-ի փուլի զարգացումը, ապա CD4+ բջիջների քանակը համապատասխանում է մինչև նշանակման վայրը մնացած հեռավորությանը, իսկ ՎԾ-ն՝ գնացքի արագությանը:

**CD4+ բջիջների քանակի և ՎՃ-ի պարբերական և կանոնավոր հետազոտություններն ուղղորդում են ժամանակին սկսելու ՀՌՎ բուժումը, օպորտունիստական վարակների կանխարգելիչ բուժումը, նաև՝ դատելու ՀՌՎ բուժման արդյունավետության մասին:**

## **Գլխավորը փոխանցման ուղիների մասին**

ՄԻԱՎ-ով ապրող որոշ մարդիկ առանձնացնում են իրենց սրբիչը, սպասքը, անկողնային պարագաները և այլն: Հարկ է հիշեցնել, որ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ վարակվելու համար բավարար քանակով ՄԻԱՎ պարունակվում է օրգանիզմի միայն որոշակի հեղուկներում: Դրանք են՝

- ➔ արյուն,
- ➔ սերմնահեղուկ,
- ➔ հեշտոցային արտազատուկներ,
- ➔ կրծքի կաթ:

ՄԻԱՎ-ը կարող է գոյատևել միայն կենդանի օրգանիզմի հեղուկներում: Վիրուսն անկայուն է արտաքին միջավայրի ազդակների նկատմամբ և հեղուկի չորանալուն զուգընթաց կորցնում է իր կենսունակությունը: Թքի, քրտինքի, մեզի միջոցով վարակումն անհնարին է: Այդ հեղուկները չեն պարունակում վարակման համար բավարար քանակով վիրուս:

✦ Գոյություն ունի ՄԻԱՎ-ով վարակման երեք ուղի՝

- ➔ սեռական ճանապարհով,
- ➔ արյան միջոցով,
- ➔ մորից երեխային:

## **Սեռական ճանապարհով վարակում**

- ➔ Հնարավոր է վարակվել առանց պահպանակի բոլոր տեսակի (հեշտոցային, բերանային, հետանցքային) ներթափանցող սեռական հարաբերությունների ժամանակ:
- ➔ ՄԻԱՎ-ով վարակվելու առումով առավել վտանգավոր են հետանցքային (անալ) հարաբերությունները:
- ➔ Բերանային (օրալ) հարաբերության ժամանակ ևս հնարավոր է վարակվել

ՄԻԱՎ-ով, թեև հեշտոցային և հետանցքային հարաբերությունների համեմատ այն նվազ վտանգավոր է: Օրալ հարաբերության ժամանակ ՄԻԱՎ-ով վարակման հավանականությունը մեծանում է, եթե սերմնահեղուկը լցվում է բերանի խոռոչ, բերանի խոռոչի և կոկորդի լորձաթաղանթները բորբոքված են:

- ➔ Տղամարդուց կնոջը ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը մոտ 3 անգամ ավելի մեծ է, քան կնոջից տղամարդուն:

### **Արյան միջոցով վարակում**

- ➔ Հնարավոր է վարակվել չախտազերծված ներարկման պարագաներ օգտագործելիս, չախտազերծված գործիքներով դաշվածքներ կատարելիս:
- ➔ ՄԻԱՎ-ը կարող է փոխանցվել արյան փոխներարկման, օրգանների փոխպատվաստման ժամանակ:
- ➔ Հնարավոր է վարակվել թարմ արյան տեսանելի հետքեր պարունակող գործիքներով մաշկը վնասվելիս (ածելի, մկրատ, բժշկական սրածայր գործիքներ և այլն):

**ՄԻԱՎ վարակ ունեցող մորից երեխային  
ՄԻԱՎ-ի փոխանցում** ՄԻԱՎ-ը կարող է  
փոխանցվել

- ➔ հղիության ընթացքում,
- ➔ ծննդաբերության ժամանակ,
- ➔ կրծքով կերակրելիս:

**ՄԻԱՎ-ը չի փոխանցվում** առօրյա  
կենցաղային շփումների՝ ձեռքսեղմման,  
համբույրի, գրկախառնվելու ժամանակ,  
հեռախոսից, համակարգչից օգտվելիս,  
հագուստի և սպիտակեղենի միջոցով,  
հազի, փռշտոցի, համբույրի, ջրի, սննդի,  
սպասքի միջոցով, լողավազանում լողալիս,  
շոգեբաղնիք, մարզասրահ հաճախելիս,  
հասարակական գուգարանից օգտվելիս,  
մոծակի կծելու միջոցով:

## Բաժին 2. Հոգեկան առողջություն

Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանման՝ առողջությունը ֆիզիկական, հոգեկան և սոցիալական լիակատար բարօրության վիճակ է, այլ ոչ թե միայն հիվանդությունների կամ ֆիզիկական արատների բացակայություն: Մարդու արյան մեջ ՄԻԱՎ-ի առկայությունն անդրադառնում է նրա առողջության վրա: Փորձենք պարզել, թե ինչ կերպ: Ասում են՝ ,Առողջ մարմնում՝ առողջ հոգի: Մեծամասամբ ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական մարդիկ գործնականում ֆիզիկապես առողջ են մնում շուրջ 10 տարի կամ ավելի երկար: Արդյո՞ք դա նշանակում է նաև առողջ հոգի, հոգեբանական և սոցիալական խնդիրների բացակայություն: Ցավոք, ո՛չ:

Այսպիսով, ՄԻԱՎ-ն առողջության վրա երկակի ազդեցություն է ունենում.

- ➔ Ազդում է հոգեկան վիճակի վրա (ինքնագնահատական, հարաբերություններ այլ մարդկանց հետ և այլն),
- ➔ Ազդում է մարմնի վրա:

## Վերաբերմունք սեփական անձի հանդեպ

ՄԻԱՎ վարակ ախտորոշումը շատերի կողմից չափազանց ցավագին է ընդունվում: Դա պայմանավորված է մի շարք պատճառներով՝ տեղեկատվության պակաս, հասարակության մեջ առկա կարծրատիպեր, տվյալ պահին լրիվ ապաքինման անհնարիներություն և այլն: Իմանալով ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակի մասին՝ մարդը ճգնաժամ է ապրում: Յուրաքանչյուր ճգնաժամի պատճառն այն է, որ փոփոխված պայմաններում վարքի հին ձևերն այլևս ընդունելի չեն: Կյանքում տեղի են ունենում փոփոխություններ, տվյալ դեպքում հայտնվում է ՄԻԱՎ-ը, և հարկավոր է ջանք գործադրել, որոշակի քայլեր կատարել, սովորել ապրել ՄԻԱՎ-ով:

ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակի հետ համակերպվելու գործընթացը երբեմն կարող է տարիներ տևել: Մինչդեռ սա ամենակարևորն է, ինչ մարդն առաջին հերթին կարող է և պետք է անի իր համար: Հարկավոր է չունենալ



մեղքի զգացում ՄԻԱՎ-ով վարակված լինելու համար, հարկավոր է սիրել սեփական անձն ու ապրել լիարժեք կյանքով:

***Երբ մարդու հոգում ներդաշնակություն է, ՄԻԱՎ վարակը զգալիորեն դանդաղ է ընթանում:***

Երբ երկար տարիներ ՄԻԱՎ-ով ապրող մարդուն խնդրում են կազմել երկու ցուցակ՝ մեկում գրառելով այն ամենը, ինչ նրանից խլել է ՄԻԱՎ վարակը, իսկ մյուսում՝ ինչ տվել է նրան հիվանդությունը (նոր ծանոթություններ, նոր նպատակներ կյանքում և այլն), երկրորդ ցուցակը սովորաբար ավելի երկար է ստացվում: Իհարկե, ոմանք նախընտրում են չհիշել իրենց կարգավիճակի մասին և շարունակել ապրել այնպես, ինչպես նախքան ախտորոշումը: Սակայն շատերին ՄԻԱՎ վարակ ախտորոշումն օգնում է ինքնադրսևորվելու. ոմանք օգնում են փոխօգնության խմբերի նորեկներին ընդունելու իրենց ախտորոշումը, մյուսները մասնակցում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց

շարժումներին (ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցեր գործում են գրեթե բոլոր երկրներում), երրորդները ներգրավվում են կանխարգելման ծրագրերում՝ օգնելով ուրիշներին իմանալու ավելին ՄԻԱՎ վարակի մասին, որպեսզի խուսափեն վարակումից:

Ախտորոշումն ստանալու պահից բացի՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդու կյանքում կարող են լինել նաև ճգնաժամային այլ պահեր:

- ➔ **Երբ ի հայտ են գալիս որոշ ախտանշաններ՝ ՄԻԱՎ վարակին չառնչվող, բայց դրան վերագրվող:** Հաճախ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ հասարակ մրսածուրթյունը, մաշկի վրա հայտնված ամենափոքր բշտիկն անգամ վերագրում են դիմադրողականության թուլացման, ՄԻԱՎ վարակի դրսևորման հետ:
- ➔ **Երբ սկսում են դրսևորվել հիվանդության առաջին ախտանշանները՝ ցավ կամ որևէ լուրջ հիվանդություն:**
- ➔ **Երբ ախտորոշվում է ՁԻԱՀ:** Նախկինում դա նշանակում էր մոտալուտ մահ: Այսօր կիրառվող ՀՌՎ բուժումը դանդաղեցնում է ՄԻԱՎ վարակի զարգացումը,

երկարացնում է ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու կյանքն ու բարելավում կյանքի որակը:

➔ **Երբ վրա է հասնում բուժումն սկսելու ժամանակը:** Մինչ այդ պահը մարդը կարող էր և չհիշել իր հիվանդության մասին: Այժմ ծագում է օրը մի քանի անգամ դեղեր ընդունելու անհրաժեշտություն: Սա շատ դժվար է: Կան անգամ բուժման կարգը պահպանելուն ուղղված ծրագրեր: Դրանք օգնում են հաղթահարելու բուժումն սկսելուն առնչվող հոգեբանական խոչընդոտները և հարմարվելու դեղերի մշտական ընդունմանը: Ժամանակի ընթացքում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար դեղերի ընդունումը դառնում է նույնքան սովորական, որքան ատամներ լվանալը:

➔ **Այլ իրավիճակներ...**

Կյանքի ծանր շրջանները պետք է պարզապես ապրել: Դա առավել հեշտ է լինում, երբ առկա է այլ մարդկանց, օրինակ՝ հարազատների, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց աջակցությունը:

## Հարաբերություններ ուրիշների հետ

**Ասել, թե չասել ՄԻԱՎ-ի նկատմամբ  
սեփական կարգավիճակի մասին**

ՄԻԱՎ վարակ ախտորոշմանը մարդիկ տարբեր կերպ են արձագանքում: Մեկը ցանկանում է մեկուսանալ և այնպես անել, որ որևէ մեկը չիմանա այդ մասին: Մեկ ուրիշը, ընդհակառակը, ցանկանում է ,դրոշմե դնել ճակատին, որպեսզի բոլորն իմանան:

ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական կարգավիճակի մասին լուրը ուժեղ սթրես է: Մարդկանց մեծ մասն այդ մասին ինչ-որ մեկին ասելու, մտորումները փոխանցելու կարիք է ունենում: Սկզբնական շրջանում աշխատե՛ք անկեղծանալ միայն այն մարդկանց մոտ, որոնց աջակցությանն ու օգնությանը վստահում եք և համոզված եք, որ նրանք Ձեր ախտորոշման մասին ուրիշներին չեն հայտնի: Ի նկատի ունեցեք, որ մարդը կարող է բացահայտել Ձեր կարգավիճակը ոչ միտումնավոր, պայմանավորված որևէ պատճառով:

Եթե Դուք բուռն զգացմունքների ազդեցության տակ եք, միգուցե նախ դիմեք ,Թեժ գիծե հեռախոսային ծառայություն: Այդ

դեպքում Դուք կարող եք լիովին վստահ լինել, որ խոսակցությունը գաղտնի կմնա և չի ունենա որևէ անցանկալի հետևանք Ձեզ համար:

Ի վերջո, վաղ թե ուշ յուրաքանչյուրն ինքն է որոշում՝ արժե արդյոք որևէ մեկին տեղեկացնել ՄԻԱՎ-ի նկատմամբ սեփական կարգավիճակի մասին, երբ և ինչպես այդ անել: Ավելի լավ է չշտապել, կշռադատել բոլոր դրական և բացասական կողմերը: Դրա համար փորձե՛ք պատասխանել ներքոնշյալ հարցերին:

### **Ինչո՞ւ ասել**

Ինչո՞ւ եմ ես ցանկանում բացահայտել իմ կարգավիճակը, ի՞նչ կտա դա ինձ, պարզապես ցանկանում եմ խոսե՞լ ինչ-որ մեկի հետ, թե՞ ինձ աջակցություն է հարկավոր:

### **Ո՞ւմ ասել**

Կախված նրանից, թե ինչպես եք պատասխանել առաջին հարցին՝ իմաստ ունի որոշել, թե ում ասել: Պետք է ի նկատի ունենալ, որ տարբեր մարդիկ կարող են տարբեր կերպ արձագանքել այդ լուրին: Մտածե՛ք, թե որքանով է մարդը պատրաստ Ձեր անկեղծությանը, ինչպիսին կարող է լինել նրա արձագանքը, և որքանով եք Դուք ինքներդ

պատրաստ դրան: Օգտակար կարող է լինել, եթե Դուք ինքներդ Ձեզ հետ խաղարկեք Ձեր խոսակցության հնարավոր զարգացումները:

### Ինչպե՞ս ասել

Պակաս կարևոր չէ, թե ինչպես Դուք կասեք Ձեր կարգավիճակի մասին: Լավ է ընտրել հարմար պահ, այլ ոչ թե հանկարծակիի բերել մարդուն անպատեհ հայտնած լուրով: Միգուցե խոսակցությունն առավել հեշտ լինի սկսել, եթե զրուցակցին նախապատրաստեք դրան: Օրինակ՝ կարելի է պատմել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ հետաքրքիր հեռուստատեսային հաղորդման մասին, տեսանելի տեղում թողնել դրան առնչվող որևէ բուկլետ կամ լրագրային հոդված: Դա հնարավորություն կտա սկսելու խոսակցությունը, պարզելու ՄԻԱՎ վարակի վերաբերյալ Ձեր մտերիմ մարդու պատկերացումները, տալու նրան ճիշտ տեղեկատվություն հիվանդության վերաբերյալ:

Սկսելով խոսակցությունը՝ հայտնե՛ք ձեր նորությունը ուղիղ և անկեղծորեն: Մի՛ փորձեք երկար նախապատրաստել մարդուն, նա առանց այդ էլ առաջին բառերից կզգա, որ Դուք անհանգստացած եք: Նաև պատրա՛ստ եղեք զրուցակցի ցանկացած պատասխանին: Դուք

չէք կարող վերահսկել ուրիշի զգացմունքներն ու վախերը: Գլխավորը հիշե՛ք, որ այդ արձագանքը իրավիճակի, այլ ոչ թե Ձեր անձի հանդեպ է:

## Սեռական հարաբերություններ

Այն, որ ՄԻԱՎ-ը փոխանցվում է սեռական ճանապարհով, ամենևին չի նշանակում, թե ՄԻԱՎ-ով վարակված մարդիկ պետք է հրաժարվեն սեռական կյանքով ապրելուց: Կարևորը զուգընկերոջ վարակումը կանխելն է: Եթե արյան, հեշտոցային արտազատուկների, սերմնահեղուկի հետ շփում չկա, ՄԻԱՎ-ի փոխանցումը բացառվում է: Վարակը զուգընկերոջը չփոխանցելու համար հարկավոր է սեռական յուրաքանչյուր հարաբերության ժամանակ օգտագործել պահպանակ: Պահպանակը պաշտպանում է ոչ միայն ՄԻԱՎ վարակից, այլև սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակներից, նաև ՄԻԱՎ-ի այլ ենթատիպով կրկնավարակումից:

**Պահպանակի օգտագործումը չափազանց կարևոր է սեփական և զուգընկերոջ առողջության պահպանման համար:**

## Բաժին 3. Ֆիզիկական առողջություն

### Բժշկական հսկողություն, կանխարգելում և բուժում

Ֆիզիկական առողջության պահպանման համար չափազանց կարևոր են պարբերական բժշկական զննումները, օպորտունիստական հիվանդությունների կանխարգելումն ու բուժումը, հակառետրովիրուսային բուժումը:

#### Պարբերական բժշկական զննումներ

Պարբերական բժշկական զննումները և դրանց ժամանակ կատարվող հետազոտությունները հնարավորություն են տալիս ժամանակին հայտնաբերելու իմունային անբավարարության խորացման նշանները, ժամանակին սկսելու ՀՌՎ բուժումը, նաև օպորտունիստական հիվանդությունների կանխարգելումն ու բուժումը: Ուստի անհրաժեշտ է կանոնավոր այցելել բժշկին և ճշգրտորեն կատարել նրա ցուցումները: Չննումների պարբերականությունը կսահմանի բժիշկը:



## **Օպորտունիստական հիվանդությունների կանխարգելում և բուժում**

Օպորտունիստական բազմաթիվ վարակների հարուցիչներ մշտապես գտնվում են մեր շրջապատում: Դրանցով չվարակվելու համար հարկավոր է հնարավորինս խուսափել ընտանի կենդանիների արտաթորանքների հետ շփումից, ակվարիում, թռչնավանդակներ մաքրելուց: Շփվելով կատվի կղանքի հետ՝ հնարավոր է վարակվել տոքսոպլազմոզի հարուցիչով: Նույն վտանգն առկա է նաև հողային աշխատանքներ կատարելիս: Նման դեպքերում պետք է պարտադիր օգտագործել ռետինե ձեռնոցներ: Խորհուրդ չի տրվում օգտագործել հում ձու, վատ եփված միս:

Դիմադրողականության թուլացման դեպքում կարևոր է կանխարգելել օպորտունիստական հիվանդությունները: Այդ նպատակով բժիշկը կարող է նշանակել որոշ դեղեր: Հիմնականում դրանք ոչ թանկարժեք և հասանելի դեղեր են, որոնց ընդունումն առանձնակի դժվարություններ չի առաջացնում:

Եթե, այնուամենայնիվ, օպորտունիստական հիվանդությունից խուսափել չի հաջողվում, բուժման համար նշանակվում են հատուկ դեղեր: ՄԻԱՎ վարակի վաղ փուլերում այդ հիվանդությունները հեշտ են բուժվում: Ահա թե ինչու կարևոր է դրանց ժամանակին ախտորոշումը, ինչն անհնարին է առանց սեփական առողջության նկատմամբ ուշադիր վերաբերմունքի և բժշկի հսկողության:

### **Հակառետրովիրուսային բուժում**

ՀՌՎ բուժումը դանդաղեցնում է ՄԻԱՎ վարակի զարգացումը և հետաձգում է ՁԻԱՀ-ի փուլը: Այն ներառում է առնվազն 3 դեղի միաժամանակյա ընդունում: ՀՌՎ բուժման նպատակը ՎԾ-ի նվազեցումն է մինչև անորոշելի մակարդակ:

ՀՌՎ բուժման անհրաժեշտությունը որոշում է մասնագետ բժիշկը լաբորատոր և կլինիկական հետազոտությունների արդյունքներով:

Երբեմն դեղերի ընդունման առաջին ամիսներին առաջանում են զանազան

կողմնակի ազդեցություններ, որոնք որոշ ժամանակից անցնում են, հակառակ դեպքում բժիշկը կարող է փոխել դեղերի համակցումը:

Որպեսզի բուժումն արդյունավետ լինի, հարկավոր է դեղերն ընդունել միևնույն ժամերին՝ խստորեն հետևելով բժշկի նշանակումներին: Դա անհրաժեշտ է արյան մեջ դեղերի մշտական քանակության պահպանման համար: Եթե դեղերի ընդունման կարգը չի պահպանվում, կամ հիվանդը հաճախակի մոռանում է ընդունել դրանք, կարող է զարգանալ դեղակայունություն, ինչի հետևանքով դեղերը կդադարեն ազդել վիրուսի վրա:

ՅՌՎ բուժումն սկսելը չափազանց լուրջ պահ է ՄԻԱՎ վարակ ունեցող մարդու կյանքում: Եթե Դուք համոզված չեք, որ կարող եք առանց բացթողումների, կանոնավոր ընդունել դեղերը, ուրեմն Ձեզ դեռևս ժամանակ է հարկավոր դրան նախապատրաստվելու համար: Միզուցե Ձեզ կօգնի ՅՌՎ բուժում ստացող մարդու հետ զրույցը կամ մտերիմների աջակցությունը:

## Համագործակցություն բժշկի հետ

Բժշկի հետ հարաբերություններդ լինելու են երկարատև: Հնարավոր է՝ անձնական կյանքիդ մասին քո բժիշկն ավելի շատ իմանա, քան մեկ ուրիշը: Հաստատի՛ր վստահելի հարաբերություններ՝ մշտապես հիշելով, որ դուք համագործակցում եք: Պահպանի՛ր բժշկի սահմանած պլանային այցելությունների գրաֆիկը, խստորեն հետևի՛ր նրա խորհուրդներին: Ակտիվ դիրք գրավի՛ր, տու՛ր քեզ հուզող բոլոր հարցերը և ստացի՛ր դրանց պատասխանները, անհրաժեշտություն դեպքում խնդրի՛ր պարզաբանումներ:

Բժշկի հետ արդյունավետ հաղորդակցմանը կարող է խոչընդոտել ժամանակի սղությունը: Այդ իսկ պատճառով նախքան բժշկին այցելելը պատրաստի՛ր ,այցելության ծրագիրե՝ հստակեցնելով բժշկին դիմելու պատճառները, ակնկալվող օգնությունը: Ցանկալի է կազմել այն հարցերի ցուցակը, որոնք ցանկանում ես ուղղել բժշկին: Նախօրոք կազմված հարցացուցակը կօգնի խնայելու բժշկի ժամանակը և նրա հետ շփումը դարձնելու առավել արդյունավետ:

Պատմի՛ր բժշկին քեզ անհանգստացնող ախտանշանների մասին. ե՞րբ են դրանք ի հայտ եկել, որքա՞ն են տևում, ինչպե՞ս են արտահայտվում, ի՞նչն է նպաստում դրանց սրացմանը կամ թուլացմանը, արդյոք նախկինում եղե՞լ են նման ախտանշաններ: Չմոռանաս ասել նաև սննդակարգի կամ ֆիզիկական ծանրաբեռնվածության փոփոխությունների, օգտագործած դեղերի մասին:

Եղի՛ր առավելագույնս անկեղծ: Եթե չես կարողացել կատարել բժշկի ցուցումները կամ բուժման առումով դժվարություններ ունես, հայտնի՛ր այդ մասին բժշկին: Նա կարող է քեզ խորհուրդներ տալ, որոնք կօգնեն հաղթահարելու ծագած խնդիրները: Եթե բժշկից թաքցնես ի հայտ եկած դժվարությունները, նա չի կարողանա օգնել քեզ:

Գրառի՛ր բժշկի ցուցումներն ու խորհուրդները: Դա կօգնի խուսափելու մի իրավիճակից, երբ այն ամենը, ինչ պարզ ու հասկանալի է բժշկի սենյակում, բազմաթիվ հարցեր է առաջացնում դրան հակառակ կողմում: Գրառումները կօգնեն քեզ չմոռանալ և կատարել բժշկի ցուցումները:

### Ինչի՞ մասին ասել բժշկին

Կան որոշակի տեղեկություններ, որոնք չափազանց կարևոր նշանակություն ունեն, և դրանց մասին անպայման պետք է ասել բուժող բժշկին:

Հայտնի՞ր բժշկին, եթե օգտագործում ես որևէ դեղ: Բժշկին անհրաժեշտ է իմանալ այդ մասին, որպեսզի օգնի խուսափելու տարբեր դեղերի միաժամանակյա օգտագործման դեպքում հնարավոր անցանկալի

հետևանքներից: Ունեցի՞ր դեղերի ցուցակը կամ գոնե հիշի՞ր բոլոր այն դեղերի անվանումներն ու չափաքանակները, որոնք ընդունում ես:

Եթե կան դեղեր, որոնք քեզ մոտ ալերգիա կամ անսովոր ռեակցիա են առաջացնում, հայտնի՞ր այդ մասին բժշկին:

Բժշկին անհրաժեշտ է իմանալ նաև քեզ մոտ քրոնիկ այլ հիվանդության առկայության մասին, քանի որ դրանց դեպքում կարող է հակացուցված լինել այս կամ այն դեղի օգտագործումը:

### Ինչ՞ հարցնել բժշկին

➔ Ինչպե՞ս է կոչվում դեղը, և ինչպիսի՞ն է նրա ազդեցությունը: Բժիշկը կբացատրի, թե ինչու է նշանակում այդ դեղը, և ինչպես այն պետք է օգնի քեզ:

- ➔ Ե՞րբ, ինչպե՞ս և որքա՞ն ժամանակ պետք է ընդունել դեղերը: Կարևոր է պարզել՝ կա արդյոք սննդի կամ ըմպելիքի որևէ տեսակ, որը չի կարելի համատեղել նշանակված դեղերի հետ: Ի՞նչ անել, եթե պատահաբար բաց ես թողել դեղի ընդունումը՝ պարզապես ընդունել հաջորդ անգամ, թե՞ այն ժամանակ, երբ հիշել ես բացթողման մասին, հարկավոր է ավելացնել դեղաչափը, թե՞ ոչ:
- ➔ Որո՞նք են հնարավոր կողմնակի ազդեցությունները, ի՞նչ անել դրանց ի հայտ գալու դեպքում:

## Ընտանիք և երեխաների ծնունդ

Յուրաքանչյուր մարդու համար ընտանիք կազմելը և երեխաներ ունենալը կարևոր է: ՄԻԱՎ-ով վարակված շատ մարդիկ կարծում են, թե իրենք կարող են լուրջ հարաբերություններ ունենալ միայն ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական մարդկանց հետ: Կյանքը ցույց է տալիս, որ մարդիկ սիրահարվում և ընտանիք են կազմում՝ առաջնորդվելով ոչ թե ՄԻԱՎ-ի նկատմամբ կարգավիճակով, այլ միանգամայն

այլ չափանիշներով: Անգամ գոյություն ունի հատուկ տերմին՝ «դիսկորդանտ զույգ», երբ զուգընկերներից մեկը ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական է, իսկ մյուսը՝ ոչ:

ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական մարդիկ կարող են ընտանիք կազմել, ունենալ և մեծացնել առողջ երեխաներ: Կարևոր է իմանալ, որ ՄԻԱՎ-ը չի փոխանցվում վարակված հորից երեխային, եթե բեղմնավորման ժամանակ մայրը չի վարակվել:

ՄԻԱՎ վարակ ունեցող մորից երեխային վարակը կարող է փոխանցվել հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ, կրծքով կերակրելիս: Որևէ կանխարգելիչ միջոցառում չիրականացնելու դեպքում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը կազմում է 25-45%: Համալիր կանխարգելիչ միջոցառումների շնորհիվ այդ հավանականությունը հնարավոր է նվազեցնել մինչև 1-2%:

Հղիության ընթացքում ՄԻԱՎ-ը պտղին կարող է փոխանցվել ընկերքի միջով: Ընկերքը օրգան է, որի միջոցով սաղմնային կյանքի ընթացքում իրականացվում են



պտղի սնուցումը, արտաթորությունը և շնչառությունը: Սա նաև պտղին պաշտպանում է մոր արյան մեջ գտնվող վնասակար գործոններից՝ վարակներից, թույներից և այլն: Եթե ընկերքը վնասված կամ բորբոքված է, դրա պաշտպանական հատկությունները թուլանում են՝ հնարավորություն տալով, որ ՄԻԱՎ-ը ներթափանցի պտղի օրգանիզմ:

Ծննդաբերության ժամանակ երեխան վարակվում է ծննդաբերական ուղիներով անցնելիս մոր արյան, հեշտոցային արտազատուկների հետ շփման կամ դրանք կուլ տալու միջոցով:

Կրծքով կերակրվելիս երեխան կարող է վարակվել անմիջականորեն կրծքի կաթի միջոցով կամ պտուկների, հարպտուկային շրջանի մաշկի արյունահոսող վնասվածքներից մայրական արյուն կուլ տալու հետևանքով:

### **Ինչպե՞ս կարելի է նվազեցնել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգը**

Երեխայի՝ ՄԻԱՎ-ով վարակման հավանականությունը նվազեցնելու համար նախ անհրաժեշտ է, որ հղի կինն ամենայն

ուշադրությամբ հետևի իր առողջությանը, ճիշտ սնվի, բավարար չափով քնի, հնարավորինս խուսափի սթրեսային իրավիճակներից, ունենա առողջ ապրելակերպ: Չափազանց կարևոր է բժշկի հսկողության ներքո գտնվելն ու պարբերաբար որոշակի հետազոտություններ անցնելը, ՄԻԱՎ վարակի ֆոնին առաջացած հիվանդություններից ժամանակին բուժվելը: ՄԻԱՎ վարակ ունեցող մորից երեխային վարակի փոխանցման կանխարգելման բաղադրիչներն են՝

- ➔ հղիության ընթացքում և ծննդաբերության ժամանակ մոր կողմից ՀՌՎ դեղերի ընդունումը,
- ➔ պլանային կեսարյան հատման միջոցով (հղիության 38-րդ շաբաթում) ծննդալուծումը,
- ➔ կրծքով կերակրելուց հրաժարումը,
- ➔ ծնվելուն պես ՀՌՎ օշարակներով նորածնի 4-շաբաթյա կանխարգելիչ բուժումը:

Արդյունավետ կանխարգելման կարևոր նախապայմաններից է հղի կնոջ մոտ ՄԻԱՎ վարակի վաղ հայտնաբերումը: Դրա համար անհրաժեշտ է, որ բոլոր հղիները,

նաև հղիություն ծրագրող կանայք անցնեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն և խորհրդատվություն հղիության հնարավորինս վաղ ժամկետում: Ցանկալի է այդ անել հղիության կապակցությամբ կանանց կոնսուլտացիա առաջին այցելության ժամանակ:

### **Ի՞նչը կարող է մեծացնել երեխայի՝ ՄԻԱՎ-ով վարակման վտանգը**

Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը մեծացնող գործոններից են՝

- ➔ մոր մոտ ՎԾ-ի բարձր մակարդակը,
- ➔ հղիության ընթացքում թմրամիջոցների, ծխախոտի, ալկոհոլի օգտագործումը,
- ➔ հղի կնոջ տարիքը (30-ից բարձր),
- ➔ հղիի մոտ սակավարյունության, շաքարախտի, երիկամային հիվանդությունների առկայությունը, վիտամին A-ի անբավարարությունը,
- ➔ ծննդաբերության ժամանակ երկարատև (4 ժամից ավելի տևող) անջուր շրջանը,
- ➔ ծննդաբերության ժամանակ արյունահոսությամբ ուղեկցվող մանկաբարձական միջամտությունները:

Վարակման վտանգը բարձր է վաղաժին, անհաս և ժամկետից ուշ ծնված նորածինների համար:

### **Ե՞րբ է հնարավոր պարզել ՄԻԱՎ վարակ ունեցող մորից ծնված երեխայի կարգավիճակը**

Եթե մայրը վարակված է ՄԻԱՎ-ով, նրա մոտ արտադրվում են հակամարմիններ, որոնք հղիության ընթացքում ընկերքի միջով անցնում են պտղին: Հետևաբար ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված բոլոր նորածինների՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ սկզբնական հետազոտության արդյունքները կլինեն դրական: Սակայն դա չի նշանակում, որ նրանք բոլորը վարակված են ՄԻԱՎ-ով: Մայրական հակամարմինները շրջանառվում են նորածնի արյան մեջ 15-18 ամսվա ընթացքում: Ուստի ՄԻԱՎ վարակ ունեցող մորից ծնված երեխայի վարակվածությունը հայտնաբերելու համար հակամարմինների հայտնաբերման հետազոտությունը պետք է կատարել երեխայի 18 ամիսը լրանալուց հետո: Գոյություն ունի նաև հետազոտության մեկ այլ մեթոդ՝ պոլիմերազային շղթայական

ռեակցիա, որը հնարավորություն է տալիս պարզելու ՄԻԱՎ-ի նկատմամբ նորածնի կարգավիճակը կյանքի առաջին ամիսների ընթացքում:

## Առողջ սննդի սկզբունքները

Առողջ սնունդը նպաստում է իմունային համակարգի բնականոն աշխատանքին: Հայտնի է, որ որոշ վիտամինների և հանքային նյութերի անբավարարությունը կարող է հանգեցնել իմունային համակարգի գործունեության վատթարացման: Ցածր կալորիականություն ունեցող սնունդը, սպիտակուցների պակասը, B12 և A վիտամինների, նաև ցինկի անբավարարությունը կարող են բացասաբար ազդել ՄԻԱՎ վարակի ընթացքի վրա: ՄԻԱՎ վարակի ժամանակ օրգանիզմի էներգետիկ պահանջներն ավելանում են. իմունային համակարգի լարված աշխատանքի համար անհրաժեշտ են նորմալից փոքր-ինչ ավելի սպիտակուցներ և վիտամիններ: Ուստի անբավարար քանակությամբ սպիտակուցների, վիտամինների

ընդունումը կարող է խո-րացնել իմունային անբավարարությունը և արագացնել ՁԻԱՀ-ի զարգացումը:

Թերսնվելը, լյարդի, մարսողական համակարգի այլ օրգանների ծանրաբեռնվածությունն առաջացնող սննդի չարաշահումը կարող են հանգեցնել նյութափոխանակության խանգարումների և խորացնել իմունային անբավարարությունը:

**Առողջ սնունդն օգնում է կասեցնել հիվանդության զարգացումը, քաշի անկումը, օգնում է վերահսկել դեղերի ընդունման կողմնակի ազդեցությունները, նաև լավացնում է կյանքի որակը:**

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց մոտ հաճախ հարց է ծագում՝ ինչ սննդամթերք օգտագործել: Համընդհանուր և միանշանակ պատասխան այս հարցին գոյություն չունի, բայց պետք է իմանալ ճիշտ սնվելու հետևյալ հիմնական սկզբունքների մասին:

- ➔ Սնունդը պետք է լինի բազմատեսակ:
- Խորհուրդ է տրվում օգտագործել ձկան,

տավարի մսի, թռչնամսի ոչ յողոտ տեսակներ: Սննդակարգում հարկավոր է ներառել բավարար քանակությամբ բանջարեղեն, մրգեր, կանաչեղեն: Այս սննդամթերքներից շատերը բնական իմունախթանիչներ են, այսինքն՝ ընդունակ են վերականգնել իմունային համակարգը: Նույնը վերաբերում է նաև ընկույզին և մեղրին:

- ➔ Սնվել հարկավոր է հաճախակի, քիչ քանակներով, օրվա ընթացքում առնվազն 4 անգամ: Եթե նկատվում է քաշի անկում, հարկավոր է սննդակարգում ներառել ավելի շատ սպիտակուցային սնունդ:
- ➔ Անհրաժեշտ է օգտագործել օրական 8 բաժակից ոչ պակաս հեղուկ: Քաշի պահպանման խնդրի դեպքում հարկավոր է խմել բարձր կալորիականության ըմպելիքներ՝ հյութեր, օշարակներ, կամ սպիտակուցների մեծ պարունակությամբ ըմպելիքներ (կաթ, կաթնային կոկտեյլներ և այլն):

## **Ֆիզիկական վարժությունները՝ որպես ինքնագգացողության և տրամադրության լավացման միջոց**

Ֆիզիկական վարժությունների կանոնավոր կատարումն ու ֆիզիկական ակտիվությունը կարևոր նշանակություն ունեն ֆիզիկական և հոգեկան առողջության համար: Դրանք կարող են ոչ միայն լավացնել ֆիզիկական վիճակը, այլև հաճելի ժամանց դառնալ:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց փորձը և կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ինքնագգացողության լավացման նպատակով ՄԻԱՎ վարակի ժամանակ սպորտով զբաղվելն անվնաս է:

Ֆիզիկական վարժություններն ամրապնդում են իմունային համակարգը, օգնում են պահպանել մարմնի քաշը, լավացնում են ախորժակը, արյան մեջ կարգավորում են շաքարի, ճարպերի և խոլեստերինի մակարդակը, նպաստում են արյան նորմալ ճնշման պահպանմանը: Բացի այդ, ֆիզիկական վարժություններն ամրացնում են մկաններն ու ոսկորները,



օգնում են լուծելու շնչառական խնդիրները: Կանոնավոր ֆիզիկական վարժությունները ԶՌՎ բուժում ստացող հիվանդների մոտ նվազեցնում են դեղերի կողմնակի ազդեցությունների վտանգը:

Ֆիզիկապես ակտիվ լինելու երկու տարբերակ կա: Որոշակի ժամանակ՝ շաբաթական առնվազն մի քանի ժամ, տրամադրել ֆիզիկական վիճակը լավացնող որևէ սպորտաձևով կամ վարժություններով զբաղվելուն: Կարելի է նաև պարզապես առօրյա կյանքում ավելի շատ ֆիզիկական ակտիվություն մտցնել, օրինակ՝ դանդաղաշարժ վերելակին անհամբեր սպասելու փոխարեն մի քանի հարկ ոտքով բարձրանալ, որոշ ժամանակ քայլել բնակարանում: Ֆիզիկական ակտիվության նման տեսակները հաճախ չեն դիտվում որպես ֆիզիկական վարժություններ, սակայն օգտակար են առողջությանը: Ֆիզիկական ակտիվության անգամ ոչ մեծ մակարդակը կարող է լավացնել ինքնազգացողությունը, ամրացնել մկանները և բարձրացնել տրամադրությունը: Այնպիսի չափավոր ֆիզիկական ծանրաբեռնվածությունը,

ինչպիսին շաբաթական 3 անգամ 20 րոպեանոց զբոսանքն է, կօգնի նվազեցնելու սթրեսը և կլավացնի իմունային համակարգի գործունեությունը:

### **Ի՞նչ անել լավ ինքնազգացողություն ունենալու համար**

Առողջական խնդիրներից խուսափելու համար հարկավոր է հետևողական լինել սեփական առողջության հանդեպ, անհապաղ արձագանքել առողջական վիճակի ցանկացած փոփոխությանը և անհրաժեշտության դեպքում համապատասխան կերպով փոխել ապրելակերպը:

Կանոնավոր այցելե՛ք բժշկին և ճշգրտորեն կատարե՛ք նրա ցուցումները: Պարբերական այցելությունները հնարավորություն կտան ժամանակին հայտնաբերելու իմունային անբավարարության խորացման նշանները և սկսելու ՀՌՎ բուժում: Ժամանակին սկսված ՀՌՎ բուժումը, նշանակված դեղերի ճիշտ ընդունումը հնարավորություն կտան կասեցնելու հիվանդության զարգացումը:

Խուսափե՛ք մրսածությունից, նաև տուբերկուլոզով, գրիպով, վարակային և սնկային այլ հիվանդություններ ունեցող մարդկանց հետ շփվելուց, քանի որ դրանք լրացուցիչ ծանրաբեռնվածություն են ստեղծում իմունային համակարգի համար և արագացնում են իմունային անբավարարության զարգացումը: Կարևոր է պաշտպանվել նաև սեռական ճանապարհով փոխանցվող վարակներից, քանի որ ՄԻԱՎ վարակի ժամանակ այդ հիվանդություններն ավելի ծանր են ընթանում և ավելի դժվար են բուժվում: Սեռական յուրաքանչյուր հարաբերության ժամանակ օգտագործվող պահպանակը կպաշտպանի սեռավարակներից, նաև ՄԻԱՎ-ով կրկնավարակումից:

Երբեք մի՛ մեկուսացեք, ապրե՛ք ակտիվ, բովանդակալից կյանքով: Դրական ներքին վերաբերմունքը կօգնի պահպանելու առողջությունն ու լավ ինքնազգացողությունը:

## Բաժին 4. Ու՞ր դիմել օգնության համար

Առողջական խնդիրների առաջացման դեպքում միանգամայն տրամաբանական է բժշկին դիմելը: Սակայն ՄԻԱՎ վարակին առնչվող ոչ բոլոր խնդիրները կարող է լուծել բժիշկը: Հարազատներն ու ընկերները նույնպես ոչ միշտ կարող են ցուցաբերել անհրաժեշտ օգնություն և աջակցություն, առավել ևս, որ նրանք ընդհանրապես կարող են չիմանալ քո ախտորոշման մասին: Այսպիսով, ու՞ր դիմել:

### **Վստահության հեռախոս**

Այս տարբերակը լավագույնն է, երբ պետք է տեղեկատվություն և աջակցություն ստանալ առանց բացահայտելու անունն ու ինքնությունը: Հեռախոսային ծառայություններում կարող են աշխատել բժիշկներ, հոգեբաններ կամ հատուկ պատրաստված խորհրդատուներ, որոնք կպատասխանեն քեզ հուզող հարցերին:

### **Համացանց**

Համացանցը ևս հնարավորություն է տալիս պահպանելու գաղտնիությունը: Այստեղ կարելի է գտնել անհրաժեշտ տեղեկություններ (այդ թվում վերջին նորությունները), ծանոթանալ ՄԻԱՎ ունեցող այլ անձանց հետ ծանոթության ծառայության միջոցով:

### **Փոխօգնության խմբեր**

Փոխօգնության խմբերում ընդգրկվելը հնարավորություն կտա քեզ ստանալու անհրաժեշտ տեղեկություններ և աջակցություն, իմանալու ուրիշների փորձի մասին և նրանց հետ համատեղ հաղթահարելու քո կյանքում ի հայտ եկած դժվարությունները:

### **Հոգեբանական ծառայություններ**

Միանգամայն բնական է, որ ՄԻԱՎ վարակը մարդու մոտ առաջացնում է մի շարք հոգեբանական խնդիրներ: Ինչ-որ մեկը կարող է դրանք ինքնուրույն հաղթահարել, մյուսին կարող են օգնել

ընկերները կամ փոխօգնության խմբերը, իսկ երրորդի համար խնդրի լուծման լավագույն տարբերակը մասնագիտական օգնության դիմելն է: Հոգեբանական ծառայություններ գործում են ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում և ՄԻԱՎ-ով ապրողներին աջակցող հասարակական կազմակերպություններում: Հոգեբանին կամ փսիխոթերապևտին դիմելն օգնում է մարդուն ավելի լավ ճանաչելու սեփական անձը, ավելի շատ իմանալու սեփական կարողությունների, իրավիճակը հաղթահարելու ուղիների մասին, լինելու ավելի ինքնավստահ:

### **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներով զբաղվող կազմակերպություններ**

ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական մարդկանց, նրանց հարազատներին և մտերիմներին կազմակերպությունները տրամադրում են հետևյալ ծառայությունները՝

- ➔ ՄԻԱՎ վարակի, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և թմրամոլության վերաբերյալ խորհրդատվություն,
- ➔ իրավական հարցերով խորհրդատվություն,

- ➔ մասնագետների խորհրդատվություն (բժիշկ-վարակաբան, մաշկավեներաբան, հոգեբան և այլն),
- ➔ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում:

**Կյանքի տարբեր պահերին կարող են օգտակար լինել տարբեր ծառայություններ:**  
**Գլխավորն այն է, որ Դուք իմանաք, թե ուր կարող եք դիմել և ինչ օգնություն ու աջակցություն ակնկալել:**

**Ու՞ր դիմել աջակցության համար**

**Կյանքը հնարավորություն է.  
օգտագործի՛ր այն:**

**Կյանքը երազանք է. իրագործի՛ր այն:**

**Կյանքը մարտահրավեր է. ընդունի՛ր այն:**

**Կյանքը պարտք է. կատարի՛ր այն:**

**Կյանքը խաղ է. խաղա՛ այն:**

**Կյանքը գաղտնիք է. բացահայտի՛ր այն:**

**Կյանքը երջանկություն է. կերտի՛ր այն:**

**Կյանքն այնքան հրաշալի է,**

**մի՛ կործանիր այն:**

**Կյանքը կյանք է. պայքարի՛ր դրա համար:**

*Մայր Թերեզայի մանիֆեստը*



просто, потому что слишком люблю жизнь». Мама просто обняла и заплакала. Мой добрый, хороший Игорь сказал: «Какая мне разница, чем болеет человек, если я его люблю. Не плачь, я никому тебя не отдам, мы справимся».

## **Женя, возраст неизвестен**

С пониманием конечности жизни приходит осознание того, что мы не замечаем саму жизнь. Мелочные проблемы встают на первый план, и мы откладываем жизнь на завтра, планируя, что через год сделаем это, добьемся того-то, а после будем жить вот так. Нужно научиться жить здесь и сейчас. Человек разучился радоваться малому: солнцу, хорошему настроению, общению, прикосновению другого человека. Может, именно потому, что я знаю о своем неизлечимом заболевании, и осознаю это наиболее остро. Появляются четкие цели и желания...

**ЖИЗНЬ — это возможность, исползуй её**  
**ЖИЗНЬ — это мечта, осуществи её**  
**ЖИЗНЬ — это вызов, прими его**  
**ЖИЗНЬ — это долг, исполни его**  
**ЖИЗНЬ — это игра, сырай в неё**  
**ЖИЗНЬ — это тайна, познай её**  
**ЖИЗНЬ — это шанс, воспользуйся им**  
**ЖИЗНЬ так прекрасна, не губи её**  
**ЖИЗНЬ — это жизнь, борись за неё!**

*Манифест Матери Терезы*

В разные моменты жизни вам могут быть полезны разные виды служб. Самое главное, чтобы вы знали, куда можете обратиться и на какую помощь можете рассчитывать. В каждом регионе есть свои службы. И если вы пока не знаете ни одного телефона или адреса — задайте этот вопрос своему лечащему врачу из центра СПИД, вам обязательно помогут.

### **Саша, 32 года**

Я бы очень хотел сказать, что жизнь моя, — настоящая, полноценная, счастливая жизнь, — началась после того, как мне поставили диагноз ВИЧ. И я живу, получаю удовольствие от жизни, живу не потому, что боюсь смерти, а потому, что люблю жизнь. У меня все стоит на своих местах, даже, может быть, отчасти благодаря моей болезни.

### **Юля, 23 года**

Сегодня я счастлива, у меня любящий муж, который узнал о моем диагнозе, не отвернулся от меня. У него ВИЧ-инфекции нет. Я счастлива еще потому, что у меня под сердцем растет маленькая жизнь. Я надеюсь, что мой ребенок будет здоров, и сделала все, чтобы он был счастливым.

### **Настя, 28 лет**

Как я счастлива, что у меня есть люди, которые поняли меня и просто поддержали, близкие, друзья, настоящие, никто не отвернулся от меня. Мой папа мне сказал: «Теперь мы в одной лодке — у меня сахарный диабет. Я тоже бо-

помощью. Психологические службы создаются в СПИД-центрах и в общественных организациях. Обращение к психологу или психотерапевту — это возможность больше узнать о себе, своем потенциале, о существующих способах справиться с ситуацией, чтобы чувствовать себя увереннее и лучше. Кто-то выберет индивидуальное консультирование, для других подойдет групповая терапия.

### ← СПИД-сервисные организации

В нашей стране существует большое количество общественных и государственных организаций, работающих в области ВИЧ/СПИДа. Для ВИЧ-позитивных, их родственников и близких они предоставляют следующие услуги:

- ← очное консультирование по вопросам ВИЧ, гепатитов, ИППП и наркозависимости;
- ← консультирование по правовым вопросам; консультации специалистов (психолога, инфекциониста и др.);
- ← предоставление информации о материалах по вопросам ВИЧ/СПИД (в том числе подписка на регулярные издания).

Вполне естественно, что появление у человека ВИЧ вызывает ряд психологических проблем. Кто-то привяк со всем справляться сам, кому-то могут помочь друзья или группа взаимопомощи, а для кого-то лучшим способом решения проблемы является обращение за профессиональной

### ← Психологические службы

Встречи групп взаимопомощи обычно проходят раз в неделю. На классическую группу допускаются только ВИЧ-позитивные. Группа дает возможность получить информацию и поддержку, узнать об опыте других людей и совместно продолжать жизненные трудности. Бывают группы и с более узкой специализацией, например, для ВИЧ-позитивных женщин.

### ← Группы взаимопомощи

Также позволяет сохранить анонимность. Здесь можно и почерпнуть необходимую информацию (в том числе последние новости), и познакомиться с другими ВИЧ-позитивными через службу знакомств или в чате.

## ИНТЕРНЕТ

## Часть 5. Где искать помощь?

В случае возникновения проблем со здоровьем вполне логично идти к врачу. Но далеко не все вопросы, связанные с ВИЧ, поможет решить доктор. Ответственности и друзья тоже не всегда могут оказать необходимую помощь и поддержку. Тем более, что кто-то из них может вообще не знать о вашем диагнозе. Так куда же обращаться?

### ТЕЛЕФОНЫ ДОВЕРИЯ

